

կարգուեցաւ, եւ ասոր մահուընէն ետեւ Աւ-
թանտիլեան յաջորդեց՝ Արքեպ. Թիֆլիսի ձեռ-
նադրուելով: Արդ Սահակ այս Մարտիրոս վ. ին
աշակերտելով՝ անոր հոգին ստացաւ եւ կաթո-
ղիկեայց ոխերիմն էր: Երեք տարիէն Մարտիրոս
մեկնեցաւ, հոգիներն հանդարտեցան. Սահակ
ամուսնացաւ եւ կարին գնաց, ուր Հայերու
գլխաւորին՝ Եփրիկ օղու Գրիգորին միջնորդու-
թեամբ՝ 1776 փետր. 28ին Զարուսթին Ար-
քեպ. էն քահանայ ձեռնադրուեցաւ: Ախալցխա
դարձաւ, Հայոց հովիւ եղաւ ուրիշ երեք ծեր
քահանաներուն հետ: Սրչափ ալ կաթողիկեայց
հակառակ կը խօսէր, բարեկամացաւ հայ կա-
թողիկէից ժողովրդապետ Յովհ. վ. Մաքան-
տրեանի հետ: Ախալցխայի աղքատ ժողովրդեան
օգնելու համար՝ դրամահաւաքութեան ելաւ,
կարին եկաւ, ուր հայ կաթողիկեայ քահանայի
մը հետ վիճաբանելով յաղթահարեց, որով համ-
բաւն աւելի մեծցաւ: Անկէ Կ. Պոլիս անցաւ, ուր
Զաքարիա Պատրիարքէն սիրով ընդունուեցաւ.
այստեղ հայ կաթողիկեայ եկեղեցականաց հետ
յարաբերութեան մէջ մանելով՝ մտքին մէջ
համոզում կազմեց, եւ արդէն ի ներքուստ կա-
թողիկեայ եղաւ, ինչպէս գրէ 10 Մարտ 1785
Թուակիր նամակով: 1790 Դեկտ. ին Սահակ
ժանտախտէ բռնուեցաւ եւ հայ կաթողիկեայ
Յովհ. Մաքանտրեան քահանային խօստովանե-
ցաւ, եւ հաղորդուեցաւ: Յետոյ առողջանալով
յաջորդ տարին Զատկէն ետեւ իր եկեղեցին
գնաց եւ հոն պատարագեց. Պատարագին մէջ